

ւոր զօրք ուսուսաց երանալով միով յազգին պահպանութիւնն եւ երկիրդի այլ թագաւորաց՝ պարսից եւ օսմանցոց եւ ի ժառանգաց թագաւորութեան մինն զինից ի դբունս կայսեր :

Յօդ. 2.— Հպատակութիւն մեր այնպէս եղիցի, որպէս լինիւր երբեմն յունաց եւ պարսից, տալով ի յարքունիս հարկացն եւ ի հանքաց ոսկւոյ եւ արծաթոյ, եւ ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանին որքան եւ հարկն պահանջեսցէ :

Յօդ. 3.— Մինչ ամենաողորմած եւ օգոստափառ կայսրուհին կամ ի օգնութիւն անել տարարախտ աշխարհի մերոյ եւ կործանեալ թագն նորոգել, ընտրութիւն թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամաց նորա միայն, եթէ յազգէ մերմէ եւ եթէ դբան իւրոյ հաւատարմաց :

Յօդ. 4.— Որ ոք թագաւոր կացուցի, լինիցի հայոց օրինօք եւ ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն ի սուրբ Էջմիածին օձանիցի, որպէս նախնի թագաւորքն մեր :

Յօդ. 5.— Զթագաւորական քաղաքն պատրաստեալ ի Վաղարշապատ կամ յԱնի թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յԱյրարատ գաւառի :

Յօդ. 6.— Ի նորոգել իշխանութեան մերոյ մի՛ լինիցին ծառայք իշխանաց (սարուկք), որք կարիցեն դմի-մի վաճառել ի նոցանէ, այլ լինիցին այնպէս, որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց եւ օսմանցոց եւ պարսից, որք թագաւորին միայն են ծառայք. եւ երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհ ինչ առնել զգիւղ ինչ, բնակչան շնորհեսցէ նմա. բայց շնորհընկալ իշխանն կարող է զգիւղն ընդ բնակչաց ի միասին ծախել եւ ոչ թէ բնակիչան :

Յօդ. 7.— Յարգազ վաճառականութեան սահմանեսցի օրէնք ի մէջ երկուց թագաւորացս եւ յատկացուցի մաքս իւրաքանչիւր վաճառելի իրաց եւ տացի մեզ նաւահանգիստ ի կասպիական ծովուն :

Յօդ. 8.— Ընտրութիւն Հայրապետին մերոյ լինիցի յառաջարկութիւն թագաւորին մերոյ (որպէս յայնմ ընտրի ի բոլոր ազգէն) :

II

Յօդ. 9.— Ի զօրաց կայսրութեան ուսուսաց

2000 ձիաւորք, 2000 հետեւակք եւ 2000 ուժաւորք (թնդանօթածիւղք) ըստ կարգի պետօք, թօփխանայիւք, ձեպխանայիւք եւ կերակրութիւք եւ այլ ամենայն հարկաւոր դործովք եւ պիտոյիւք, քսան ամ ժամանակօք, կայսերական ծախիւք, կալով մնացեն յերեսս երկրին Հայաստանեայց՝ վասն պահպանութեան երկրին եւ ազգին մերոյ :

Յօդ. 10.— Ամենայն ամրոցք եւ պատրաստութիւնք զինուց լինիցին ի ներքոյ հրամանի սպարապետին ուսուսաց մինչեւ ելանել նոցա ի Հայաստան աշխարհէ :

Յօդ. 11.— Ի տանէն Հայոց 1) հատուցումն լինի կայսերութեան վասն ծախուց 6000 զինուորաց եւ պետաց ուսուսաց, իւրաքանչիւր տարւոյ 60,000 թուման, յորոց 30,000 լիցի ոսկի եւ արծաթ, իսկ մնացեալ 30,000 հաց, միս եւ զինի :

Յօդ. 12.— Վերոյիշեալ 6000 զօրքն ուսուսաց անդրէն դառնան առ կայսրութիւն իւրեանց այսպիսի կերպիւ — 2000 զօրքն յետ տասն ամաց, 2000 հնգետասաներորդ տարին եւ 2000 քսաներորդ տարին. եւ իւրաքանչիւր ի վերոյ յիշեալ ժամանակաց ելանողքն լիցին չափաւորութեամբ իւրաքանչիւր պաշտօնի զինուորաց, եւ նմանապէս պակասեսցի ի տանէն հայոց հատուցումն վասն ծախուց նոցին իւրաքանչիւր ելանողաց 2000 զօրաց 20,000 թուման տարեկան :

Յօդ. 13.— Ի լրանալ քսան ամի վերոյիշեալ հատուցումն ի տանէն հայոց մեծի կայսերութեան, եթէ զբոլորն ոչ լինիցի արարեալ, որ ինչ մնացեալն՝ այն պարտք լիցի անժխտելի ի վերայ Տան Հայոց, զի հատուցէ դանձարանի կայսեր տասն եւ վեց տարի ժամանակաւ, իւրաքանչիւր տարւոյն այն պարտք ի տասն բաժնէն մէկն, առանց շահի :

1) Ծահամիրեանի «Որոզայթ Փառաց»ի արտայայտութիւններից է, որ նշանակում է հայոց պետութիւն եւ պետական բարձրագոյն իշխանութիւն : Ընդհանրապէս «Որոզայթ Փառաց»ի ազգեցութիւնը շատ մեծ է այս դաշնագրութեան մէջ. մի շարք օրէնքներ խմբագրուած են ուղղակի նրա՛ բառերով եւ նրա՛ ողով ու արտայայտութիւններով :